

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

2019/2020 ուսումնական տարի

«ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. «Փաստաթուղթ» հասկացությունը, էությունը, փաստաթղթերի նշանակությունը կառավարման համակարգում, փաստաթղթերի իրավական արժեքը:
2. Փաստաթղթերի դասակարգումը:
3. Գաղափար գործավարության մասին:
4. Փաստաթղթերի ձևավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները:
5. Փաստաթղթերի տվյալների ձևավորմանը ներկայացվող պահանջները:
6. Փաստաթղթերի ձևաթղթերը:
7. ՀՀ լեզվական քաղաքականության հիմնական դրույթները:
8. ՀՀ պետական խորհրդանիշները:
9. ՀՀ զինանշանի նկարագրությունը և գործածման կարգը:
10. ՀՀ դրոշի նկարագրությունը և գործածման կարգը:
11. Փաստաթղթերի առանձին տեսակների ձևավորման առանձնահատկությունները:
12. Փաստաթղթերի ձևավորումը:
13. Ինչպիսի՞ն պետք է լինի գործնական փաստաթուղթը:
14. Գործնական նամակ գրելու առանձնահատկությունները:
15. Գործնական փաստաթղթերի նախապատրաստման 10 սխալ:
16. Էլեկտրոնային նամակագրություն. Ինչպե՞ս գրել գործնական էլեկտրոնային հաղորդագրություն:
17. Պետական կառավարման մարմնի աշխատակազմում գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում կատարված մակագրությունը:
18. ՀՀ կառավարության նիստում, նախարարական կոմիտեի նիստում, ՀՀ վարչապետի մոտ հրավիրվող խորհրդակցություններում և հանդիպումներում արձանագրված հանձնարարականների կատարման ապահովման ու կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը:

19. Պետական և ծառայողական գաղտնիք հասկացությունը. Գաղտնիության աստիճանները:
20. Իրավաստեղծ գործունեության հասկացությունը և սկզբունքները:
21. Իրավաստեղծ գործընթացի ընդհանուր նկարագիրը:
22. Օրինաստեղծման հիմնական սկզբունքները:
23. «Իրագործելիության սկզբունք», «իրավական փորձի օգտագործման սկզբունք», «ընդունվող օրենքների տեխնիկական կատարելության սկզբունք»:
24. «Օրինականության», «ժողովրդավարության», «մարդասիրության», «օրինաստեղծման սուբյեկտների պրոֆեսիոնալիզմի», «գիտականության» սկզբունքները:
25. «Պրակտիկայի հետ կապի», «հրապարակայնության», «կոլեգիալության», «ստեղծագործական բնույթ ունենալու», «համակարգվածության», «արդարության» սկզբունքները:
26. «Օրենքների նախագծերի նախապատրաստման պատշաճության և մանրակրկիտության», «արդյունավետության», «օրինաստեղծման աշխատանքների պլանավորման և կանխատեսման», «ռետրիբուտիվ ապահովվածության» սկզբունքները:
27. «Նորմատիվ իրավական ակտ», «անհատական իրավական ակտ», «ներքին իրավական ակտ», «համատեղ նորմատիվ իրավական ակտ» հասկացությունները:
28. «Օրենսդրական ակտ», «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ», «օրենսգիրք», «օրենսդրություն» հասկացությունները:
29. Օրենսդրական ակտի և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի առանձնահատկությունները: Օրենսդրական ակտի և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի համեմատական սխեմա:
30. Գործատուի ներքին և անհատական իրավական ակտերի հրապարակման, հաշվառման, պահպանման և արխիվացման կարգը:
31. Հանրային քննարկումների վերաբերյալ ընդհանուր դրույթներ:
32. Հանրային քննարկումներին ներկայացվող պահանջները:
33. Հանրային քննարկումների անցկացման ժամկետները:

34. Հանրային քննարկումների արդյունքների ամփոփումը:
35. Նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը:
36. Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտի նախագծի **կարգավորման ազդեցության** գնահատումը և ինչո՞ւ է այն անհրաժեշտ:
37. Ո՞ր բնագավառներում է ներկայումս իրականացվում կարգավորման ազդեցության գնահատում:
38. Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը և ժամկետները:
39. Նորմատիվ իրավական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջները:
40. Նորմատիվ իրավական ակտի վավերապայմանները:
41. Նորմատիվ իրավական ակտի լեզուն:
42. Գրելու ոճը և հապավումներ օգտագործելու եղանակը:
43. Տեղանունների օգտագործումը իրավական ակտում:
44. Թվերի գրությունը. ժամկետների նշումը. Տառատեսակ, տառաչափ և տողերի միջև հեռավորություն:
45. Նորմատիվ իրավական ակտի վերնագիրը:
46. Նորմատիվ իրավական ակտի կառուցվածքը:
47. Օրենքի կառուցվածքային մասերը:
48. Նորմատիվ իրավական ակտի մասերը, դրանց համարակալումը և վերնագրերը:
49. Նորմատիվ իրավական ակտում հասկացությունների և տերմինների կիրառումը:
50. Նորմատիվ իրավական ակտում որոշ շաղկապների և բառերի կիրառումը. «և, ու, կամ» բառերի կիրառումը: Նորմատիվ իրավական ակտում հղումների կիրառումը. Անորոշ հղումներ, շրջանաձև հղումներ. շարունակական հղումներ:
51. Նորմատիվ իրավական ակտի անվանումը և դրա հիշատակումը:
52. Նորմատիվ իրավական ակտի հերթական (գրանցման) համարը և բնույթը նշելը. Նորմատիվ իրավական ակտի տեքստի ստորագրումը:
53. Օրենսդրական տեխնիկայի կանոններ:
54. Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական թարգմանությունը:
55. Նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը:

56. Նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումը:
57. Նորմատիվ իրավական ակտերի հաշվառումը և պահպանումը:
58. Նորմատիվ իրավական ակտով սահմանված ժամկետի որոշումը:
59. Ժամկետի վերջին օրը գործողություններ կատարելու կարգը:
60. Նորմատիվ իրավական ակտի փոփոխությունները և լրացումները:
61. Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ընդհանուր կանոնները:
62. Նոր խմբագրությամբ շարադրելու ձևակերպումը:
63. Նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցումը:
64. Նորմատիվ իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելը. Ուժը կորցրած ճանաչելու ձևակերպումը:
65. Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելը:
66. Նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանումը:
67. Նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը և պարզաբանման իրավասու մարմինները:
68. Հայեցակարգերի կազմման մեթոդական ցուցումներ:
69. Ռեզոլուցիաների կազմման մեթոդական ցուցումներ:
70. Ծրագրերի կազմման մեթոդական ցուցումներ:

Կառավարման ամբիոնի վարիչ՝

Վ. Խաչատրյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորմատիվ իրավական ակտեր

1. 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ:
2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին):
3. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին):
4. «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. հունիսի 15-ին):
5. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2006թ. հունիսի 15-ին):
6. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 3-ին):
7. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 1993թ. մարտի 30-ին):
8. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 2018թ. մարտի 21-ին):
9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործավարության կարգը հաստատելու մասին» N 198-Ն որոշումը:
10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. ապրիլի 5-ի նիստի N 13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները»:
11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցը»:
12. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի N 53 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «ՀՀ պետական կառավարման մարմնի աշխատակազմի ներքին գործավարության օրինակելի կարգը»:
13. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 11-ի «Հասարակությանն իրավական ակտերի մասին իրազեկման և իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին» N 1146-Ն որոշումը:
14. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հոկտեմբերի 20-ի «Գործատուի ներքին և անհատական իրավական ակտերի հրապարակման, հաշվառման, պահպանման և արխիվացման կարգը հաստատելու մասին» N 1882-Ն որոշումը:
15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական

- պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում պարտադիր կիրառման հայկական համակարգչային տառատեսակները հաստատելու մասին» N^o 1259-Ն որոշում
16. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածման այլ դեպքերը սահմանելու մասին» N 1941-Ն որոշումը:
 17. ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության դրոշի և Հայաստանի Հանրապետության զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին» N 888-Ն որոշում:
 18. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության դրոշի և դրա պատկերի գործածման այլ դեպքերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 20-ի N 239 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1864-Ն որոշումը:
 19. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման, իջեցման, փոխանցման արարողակարգը սահմանելու մասին» N 358-Ն որոշումը:
 20. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության **օրհներգի կատարման կարգը սահմանելու մասին**» N 448-Ն որոշումը:
 21. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության օրհներգի երաժշտության օգտագործման դեպքերը սահմանելու մասին» N 901-Ն որոշումը:
 22. Հայաստանի Հանրապետության 2011թ. դեկտեմբերի 29-ի նիստի N 51 որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում կարգավորման ազդեցության գնահատման համակարգի կատարելագործման հայեցակարգը»
 23. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 296-Ն որոշումը:
 24. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2003 թվականի հունվարի 14-ի ««Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» կանոնները հաստատելու մասին» N 18-Ն հրամանը:

Հիմնական գրականություն

1. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք (ձեռնարկ. երկրորդ՝ լրամշակված հրատ.):-Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 296 էջ:
2. Մ.Յու.Լալայան, Գործավարության հիմունքներ: - Եր., Զանգակ-97, 2003թ.,- 180 էջ:
3. Քալանթարյան Պ.Ա. Գործարարության գործավարություն: Ուս. ձեռնարկ.-Եր: Տնտեսագետ, 2005, 193 էջ:
4. Միրզոյան Լ. Կյանքի ուղեցույց: Ուսումնամեթոդական ձեռնարկ.- Եր.:ՎՄՎ-Պրինտ, 2012.- 344 էջ:

5. Վլադիմիր Նազարյան, Օրենսդրական տեխնիկայի հիմունքներ, (համառոտ ուսումնական ձեռնարկ), Երևան, 1995թ.:

6. Սաֆարյան Գ.Հ., Իրավաստեղծ որոշումների ձևավորման գործընթացում օբյեկտիվ գործոնների ազդեցության մի քանի հարցեր («Իրավագիտության հարցեր» միջբուհ. ժողովածու, 2001թ., № 2):

7. Սաֆարյան Գ.Հ., Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: - Եր.: ԱՌՏ, 2004թ. - 256 էջ:

8. Պետրոսյան Գ.Տ. Օրինաստեղծման հիմնական սկզբունքները.-Եր.: Ոսկան Երևանցի, 2016.-40 էջ:

9. www.arlis.am

Լրացուցիչ գրականություն

1. Ապիյան Ն., Օրինականությունը և անձի իրավունքների ամրապնդումն իրավական պետության պայմաններում, «Օրինականություն», Երևան, 2004թ., № 26, էջեր 9-14:

2. Кашанина Т. В. Юридическая техника : учебник / Т. В. Кашанина. — 2-е изд., пересмотр. — М. : Норма : ИНФРА-М, 2011. — 496 с.

3. http://www.directmedia.ru/bookview_253657_deloproizvodstvo_dokumentatsionnyi_y_menedjment/